Բ-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԴԱԼՅԱՆ ԳԵՂԱՄ ՄԻՀՐԱՆԻ

ՎԱՆԻ ԷՅԱԼԵԹԸ (ՎԻԼԱՅԵԹԸ) 1548-1914 ԹԹ. (ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Մելքոնյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Սահակյան Ռ. Օ.

պատմական գիտությունների թեկնածու
Մալխասյան Մ. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. ապրիլի 16-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. փետրվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 16-17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմներով սկսվում է հայոց պատմության ամենադժնդակ ժամանակաշրջանը: Այդ ընթացքում ավերվեցին ու ամայացան բազմաթիվ քաղաքներ և գյուղեր, աղճատվեց երկրի ազգային նկարագիրը: Հայաստանի վարչաքաղաքական մարմնին վերջնականապես ամրապնդվեցին օտարացեղ կառավարման ինստիտուտները, ինչը խիստ բարդացրեց, իսկ շատ դեպքերում՝ պարզապես անհնարին դարձրեց հայոց պետականության վերածնման հնարավորությունը:

Մեր պատմագրության մեջ Արևմտյան Հայաստանի պատմությունն ներկայացվել է գերազանցապես քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների ուսումնասիրության տեսանկյունից: Սակայն վերջին տասնամյակներին հանդես է եկել ուսումնասիրողների մի ստվար խումբ, որի ուշադրության կենտրոնում են եղել նաև Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական իրավիճակը լուսաբանող: Այս առումով հարկ է առանձնացնել Աշոտ Մելքոնյանի[1], Գոռ Երանյանի[2] և Միքայել Մալխասյանի[3] աշխատությունները: Այնուամենայնիվ Արևմտյան Հայաստանի ուսումնասիրությունում դեռ կան պատասխանի սպասող հարցեր, ի թիվս որոնց հատկապես կառանձնացնեինք պատմական աշխարհագրության բնագավառը: Ներկա ատենախոսության թեման կարևոր է և արդիական հենց այս տեսանկյունից: Այդ նպատակով ընտրվել է Արևմտյան Հայաստանի տարածքում 1548 թ. ձևավորված առավել խոշոր վարչամիավորներից Վանի էյալեթը (1865 թվականից՝ վիլայեթ): Մինչև 19-րդ դ. 40-ական թթ. կեսերն այն միջնադարին հատուկ ռազմաավատատիրական նահանգ էր, որն իր կազմում ընդգրկում էր ժառանգական կիսանկախ իշխանություններ (քրդական հուքյումեթներ, հայկական իշխանություններ և մելիքություններ) և գավառներ (օջաքլըք կամ յուրդլուք): Համեմատաբար կայուն այս կարգավիճակը, սակայն, էապես փոխվեց 19-րդ դ. 40-ական թթ. կեսերից, ինչը համընկնում է օսմանյան կառավարության կողմից թանզիմաթի քաղաքականության իրականացմանը, որն իրականում՝ փորձ էր, «արդիականացման» պատրանք ստեղծելով, փրկել կայսրությունն ահագնացող քայքայումից և վերջնական փլուզումից: Ընդհանուր առմամբ այն տևեց ավելի քան 30 տարի (1830-1860-ական թթ.)՝ ներառելով Արևմտյան Հայաստանի ամբողջ հա-

---

[1] Մելքոնյան Ա., Էրզրում: Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդական ուսումնասիրություն), Ե., 1994:

[2] Երանյան Գ., Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների, Ե., 2015: Նույնի՝ Հարավային Հայաստանը XI դ. – XVI դ. կեսերին (պատմաժողովրդական ուսումնասիրություն), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2016:

[3] Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում-17-րդ դարի առաջին կեսին, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2016:

րավը: Ընդ որում, օտարացեղ իշխանությունների հետ մահացու հարված հասցվեց նաև հայկական պետականության բեկորները հանդիսացող կիսանկախ իշխանություններին (Շատախ, Մոկս, Զեյթուն, մի փոքր ավելի ուշ՝ Սասուն): Իսկ 1870-ական թթ. վերջից այդ քաղաքականությունը ստացավ արդեն ցայտուն ընդգծված հակահայկական բնույթ: Դա է ցույց տալիս Վանի՝ արդեն, վիլայեթի, 1880-ական թթ. - 1900-ական թթ. սկզբի վարչական ձևափոխությունների ուսումնասիրությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ժամանակագրորեն ատենախոսությունն ընդգրկում է 1548-1914 թթ., այն է՝ Վանի էյալեթի ձևավորման սկզբից մինչև Առաջին աշխարհամարտի նախօրյակը: Երբեմնի ռազմաավատատիրական վարչամիավորից, 19-րդ դ. 40-ական թվականներից սկսած, Վանն աստիճանաբար վերածվում է վարչատարածքային սովորական երկրամասի[4], իսկ 1866-1877 թթ. այն մտնում էր Էրզրումի վիլայեթի կազմի մեջ: 1877 թ., վերականգնվելով որպես ինքնուրույն վարչամիավոր, Վանի վիլայեթի սահմանները և տարածքը զգալիորեն կրճատվեցին, որոնք վերջնականապես կայունացան 1890-ական թթ. սկզբին՝ անփոփոխ մնալով մինչև 1914-1915 թթ.:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է պատասխանել հետևյալ հիմնական հարցերին.

- Պարզել Վանի էյալեթի (1865-1914 թթ.՝ վիլայեթ) սահմանների և ներքին բաժանման ձևավորման պատմությունն ու օրինաչափությունները:
- Սրբագրել սկզբնաղբյուրներում հիշատակվող վարչամիավորների անվանումների արաբատառ աղավաղումները, ինչը հնարավորություն է տալիս ճշտելու դրանց տեղադրությունն ու սահմանները:
- Պարզել հայկական և օտար աղբյուրներում հիշատակվող գավառների նույնականությունը:
- Հնարավորինս վերհանել Վանի էյալեթի տարածքում գոյատևած և հայոց պետականության արտահայտությունը դիտվող հայկական կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների պատմա-աշխարհագրական, նաև՝ իրավական կարգավիճակը (մինչև 19-րդ դ. 2-րդ կեսը):
- Ներկայացնել Վանի էյալեթի տարածքում ձևավորված օտարացեղ (քրդական) հուքյումեթները կամ իշխանությունները՝ աղբյուրագիտական նյութի հիման վրա բացահայտելով վերջիններիս սահմանները, վարչական կառուցվածքը:
- Բացահայտել 19-րդ դ. 2-րդ կեսից արդեն վիլայեթի կարգավիճակով հանդես եկող Վանի սահմանները և ներքին վարչական բաժանումները, դրանց աստիճանական փոփոխություններն ու քաղաքական գլխավոր նպատակները:
- Հաշվարկել ինչպես ամբողջ երկրամասի, այնպես էլ վերջինիս առանձին վարչամիավորների տարածքը պատմական տարբեր ժամանակահատվածներում:
- Ցույց տալ Վանի վիլայեթի տարածքի բնակավայրերի ցանցի ձևավորման հիմնական ընթացքը և օրինաչափությունները:

[4] Այնուամենայնիվ, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ Վանի վիլայեթի հարավում՝ Հաքարիում, պահպանվել էին շրջաններ, ուր պետական վարչակարգը խիստ ձևական բնույթ էր կրում:

- Պարզել Վանի վիլայեթի բնակավայրերի քանակն ըստ առանձին վարչամիավորների[5]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսությունը շարադրելիս կիրառվել է պատմահամեմատական վերլուծության մեթոդը: Համեմատության մեջ են դրվել հայերեն և օտարալեզու, առաջին հերթին՝ թուրքերեն (օսմանյան), սկզբնաղբյուրների տվյալները, որոնք շարադրանքի ընթացքում ճշտվել են և դասակարգվել: Այդ հարցում զգալի չափով օգտակար են եղել նաև ռուսերեն սկզբնաղբյուրների տեղեկությունները, ինչը հնարավորություն է տվել ավելի ամբողջական պատկերացում կազմելու Վանի էյալեթի (վիլայեթի) սահմանների ձևավորմանը և վարչատարածքային զարգացման պատմությանը վերաբերող այլևայլ հիմնահարցերի մասին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկա ատենախոսությունն առաջին փորձն է գիտական հասարակությանը ներկայացնելու Վանի վիլայեթի վարչատարածքային քննությունը 16-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դ. սկիզբը: Ատենախոսությունում նորույթ են նաև երկրամասի սահմանների ձևավորումը ներկայացնող հատվածները: Առաջին անգամ տեղագրական ուսումնասիրության շնորհիվ ճշգրտվել են երկրամասի մի շարք վարչամիավորների արաբատառ առավել աղավաղված անվանումները, ինչը հնարավորություն է տվել ճշտելու դրանց տեղադիրքը: Մեծ կարևորություն ունի մինչև 19-րդ դ. 2-րդ կեսը Վանի էյալեթի տարածքի տարբեր հատվածներում գոյատևած հայկական կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների պատմաաշխարհագրական վերլուծությունը: Սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա հնարավորինս լուսաբանվել է ինչպես լավ հայտնի իշխանությունների և մելիքությունների, այնպես էլ մինչ այժմ գրեթե անհայտ ինքնավար որոշ համայնքների վարչատարածքային կացությունը: Հիմնականում նորություն է նաև մինչև 19-րդ դ. 40-ական թթ. վերջը գոյություն ունեցած քրդական կիսանկախ իշխանությունների՝ հուքյումեթների (թրք.՝ hükümet), կազմավորման ժամանակի, սահմանների, դրանց ներքին վարչական բաժանման մասին հետազոտությունը:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ինչպես Վանի էյալեթի (վիլայեթի), այնպես էլ Արևմտյան Հայաստանի պատմական աշխարհագրությանն ու ժողովրդագրության ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում, ինչպես նաև դրանք օգտագործել ավելի ճշգրիտ և մանրամասն քարտեզներ կազմելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրման բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական բովանդակությունը լուսաբանվել է հեղինակի 7 հոդվածներում, 9 քարտեզներում և «Վան-Վասպուրական ատլասում» (Ե., 2015,

[5] Առանձին հավելվածով («Հավելված 2») ներկայացրել ենք Վանի վիլայեթի հայաբնակ քաղաքային և գյուղական բնակավայրերի ցուցակները:

հայերեն և անգլերեն, 15 քարտեզ + տեքստ, ընդամենը՝ 40 էջ): Աշխատանքի դրույթները ներկայացվել են տարբեր գիտաժողովներում: Դրանք ներգրավված են ԵՊՀ-ում հեղինակի կողմից կարդացվող «Ցեղասպանագիտություն» մասնագիտացման մագիստրոսական «Հայոց ցեղասպանությունը ժողովրդագրական համատեքստում» ծրագրում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Թեմայի լուսաբանման համար մեծ նշանակություն ունի օգտագործված սկզբնաղբյուրների և տարատեսակ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, որն ընկած է սույն ատենախոսության հիմքում:

Թեմայի համար առանձնահատուկ կարևորություն ունեն պաշտոնական (օսմանյան) աղբյուրները, որոնց տվյալներից օգտվելը կապված է որոշակի բարդությունների հետ: Դրանք պայմանավորված են ինչպես արաբատառ գրության առանձնահատկություններով, այնպես էլ տասնամյակներով թուրքական աղբյուրների ձեռագիր մնալու հանգամանքով[6]: Ժամանակագրորեն Օսմանյան կայսրության վարչական բաժանման առաջին տեղեկագիրը ներկայացված է թուրք պետական գործիչ և գրող Ֆերիդուն բեյի «Սուլթանների գրություններ» աշխատությունում[7]: Ատենախոսությունը շարադրելիս հատկապես հարուստ տեղեկություններ ենք քաղել թուրք նշանավոր ճանապարհորդ և պետական գործիչ Էվլիյա Չելեբիի «Ուղեգրություն» երկից, հատկապես վերջինիս չորրորդ հատորից[8]: Առանձին տվյալներ են հանդիպում նաև առաջին հատորում[9]: Վանի էյալեթի 17-րդ դ. վարչական բաժանման վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հանդիպում թուրք հեղինակներ Այնի-Ալի էֆենդին «Օրենքների գրքույկներ» աշխատության մեջ[10],

[6] Թուրքական (օսմանյան) տպագրությունը հիմնվել է միայն 18-րդ դ. առաջին երեսնամյակին՝ ծագումով հունգարացի Իբրահիմ Մյութեֆերիկայի կողմից: Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հ. Բ, կազմ.՝ Ա.Խ. Սաֆրաստյան, Ե., 1964, էջ 256 (այսուհետև՝ ԹԱ-2):

[7] ԹԱ-2: Ուշագրավ է, որ նշանավոր հայագետ Ղուկաս Ինճիճյանի մոտ, որը նույնպես օգտագործել է թուրք հեղինակի տեղեկությունները, հանդիպում են որոշակի տարբերություններ, ինչը ենթադրել է տվել, որ գոյություն են ունեցել մեկից ավելի տեղեկագրեր: Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին: Ասիա, հտ. Ա, Վենէտիկ, Ս.Ղազար, 1806, էջ 137:

[8] [Evliya Çelebi], Evliya Çelebi seyahetnâmesi, cilt 4, Istanbul, 1314 (1896), (արաբատառ): Հմմտ. Evliyâ Çelebi b.Derviş Mehemmed Zillî, Evliyâ Çelebi Seyahatnâmesi, IV Kitap, Hazirlayanlar: Dr. Yücel Dağli-Seyit Ali Kahraman, İstanbul, 2000:

[9] «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատոր 4-«Թուրքական աղբյուրներ», գիրք Գ: Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա.Խ. Սաֆրաստյանի, Ե., 1967 (այսուհետև՝ ԹԱ-3):

[10] Հեղինակի «Օրենքների գրքույկներ» աշխատության տվյալները վերցրել ենք Քյաթիբ Չելեբիի աշխատությունից: Տե՛ս Kâtib Çelebi, Cihan-nüma, Istanbul, 1144 (1732), (արաբատառ): Հմմտ. Ա. Փափազյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999:

ինչպես նաև Քոչի բեյի և Ալի Չաուշ Սոֆիացու «Զեկուցագրերում»[11]: Ատենախոսության համար շահեկան տեղեկություններ ենք քաղել նաև թուրք հայտնի պատմիչ և աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբիի կամ Հաջի Խալիֆայի «Ջիհան նյումա» երկից[12]: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Վանի էյալեթի կազմում ընդգրկված Բիթլիսի հուքյումեթի (փաստաթղթում՝ «Բիթլիսի վիլայեթ») 16-17-րդ դդ. թվագրվող կանոնագրքում (թրք.՝ kanunnâme) արձանագրված առանձին փաստեր[13]:

Վանի էյալեթի վարչական կառուցվածքի մասին բավական մանրամասն տվյալներ են պահպանվել 1831 թ. օսմանյան առաջին համընդհանուր վիճակագրության տեղեկագրերում[14]: Վանի էյալեթի 16-րդ դ. վարչաքաղաքական հարցերի առնչությամբ իր ուրույն տեղն ունի քուրդ պատմիչ Շարաֆ (Շարաֆուդդին) խան Բիթլիսիի աշխատությունը[15]: Էյալեթի 17-18-րդ դդ. վարչական բաժանմանը վերաբերող պաշտոնական տվյալներ կան նաև թուրքական վավերագրեր օգտագործած որոշ եվրոպացի հեղինակների, մասնավորապես՝ Փ. Ռիկոյի և Յ. ֆոն-Համմերի աշխատություններում[16]: Թեմայի կապակցությամբ տվյալներ են հաղորդում նաև 17-18-րդ դդ. պարսկական որոշ սկզբնաղբյուրներ[17]: 1840-ական թվականներից Ստամբուլում պարբերաբար հրատարակվել են Օսմանյան կայսրության համապետական տարեգրքերը (թրք.՝ sâlname): Օգտագործել ենք 1846-1910 թթ. և 1915-1916 թթ. տարեգրքերի տվյալները, իհարկե, կատարելով անհրաժեշտ ճշգրտումներ և շտկումներ[18]: Որոշակի կարևորություն ունեն նաև 1866-1877 թթ.

[11] Тверитинова А.С., Второй трактат Кочибея. "Ученые записки института востоковедения АН СССР", том VI, М.-Л., 1953. ,,Трактат Али-Чауша из софии о тимариотской организации в Османской империи''. - ,,Аграрный строй Османской империи XV-XVII вв.'', составление, перевод и комментарии А.С. Тверитиновой, М., 1963.

[12] Kâtib Çelebi, նույն տեղում:

[13] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում» (XVI-XVII դդ. կանոնամեներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Խ. Սաֆրաստյանի և Մ.Կ. Ջուլալյանի, Ե., 1964:

[14] Fazila Akbal, 1831 tarihinde Osmanli imparatorluğunda idarî taksimat ve nüfus.- ,,Belleten. Türk tarih kurumu'', c. XV, sayi 60, Ankara, 1951. Հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Արաբերեն ձեռագրերի հավաքածու, թիվ 299:

[15] Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-намэ, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967. Հմմտ. Charmoy F.B., Chèref-Nameh ou Fastes de la Nation Kourde par Cheref-ou'ddin, Prince de Bidlis, tome 1, première, St. Pétersbourg, 1868.

[16] Rycaut P., The Present State of the Ottoman Empire, Westmead, Farnborough, Homts, England, 1972, էջ 177 (Լոնդոնում 1668 թ. լույս տեսած գրքի վերատպություն)]: Von Hammer J., Des Osmanischen Reichs Staatsverfassung und Staatsverwaltung, Hildesheim, 1963, էջ 262 (Վիեննայում 1815 թ. հրատարակված գրքի վերատպությունը): De Hammer J., Histoire de l'Empire Ottoman, tome 17, Paris, 1841.

[17] Tārīx-ē Ālamārāy-ē Abbāsī, ta'lif-ē Eskandar bīg Torkemān, Tehrān, 1334 (1916, պարսկերեն). „Tadhkirat Al-Mulūk. A Manuel of Safavid Administration (Circa 1137-1725)", translated and explained by V. Minorsky, L., 1943, պարսկերեն):

[18] Salname-yi devlet-i aliyye-yi osmaniye, İstanbul, 1263 (1846-1847), 1264 (1847-1848), 1265 (1848-1849), 1266 (1849-1850), 1267 (1850-1851), 1268 (1851-1852), 1269 (1852-1853), 1270 (1853-1854), 1271 (1854-1855), 1272 (1855-1856), 1273 (1856-1857), 1274 (1857-1858), 1275 (1858-1859), 1276 (1859-1860), 1277

Էրզրումի վիլայեթի մեզ հասու մի քանի տարեգրքերի տեղեկությունները[19]: 19-րդ դ. 40-ական թթ. Վանի էյալեթի վարչական կացությունը բավական մանրամասն ներկայացված է 1849-1852 թթ. թուրք-պարսկական վիճելի հարցերը լուծելու նպատակով ստեղծված սահմանազատիչ միջազգային հանձնաժողովի օսմանյան կոմիսարի քարտուղար Խուրշիդ էֆենդիի աշխատությունում[20]:

Ատենախոսությունը շարադրելիս, մասնավորապես 16-17-րդ դդ. վարչական իրավիճակի լուսաբանման հարցում, իրենց բացառիկ տեղն են գրավում հայերեն ձեռագրական աղբյուրները, առաջին հերթին՝ հիշատակարանները: Ընդ որում, մի շարք դեպքերում օգտվել ենք նաև նախորդ՝ 14-15-րդ դդ. դարերի նման աղբյուրներից[21]: Հայերեն սկզբնաղբյուրների շարքում առանձնակի հետաքրքրություն է

(1860-1861), 1278 (1861-1862), 1279 (1862-1863), 1280 (1863-1864), 1281 (1864-1865), 1282 (1865-1866), 1283 (1866-1867), 1284 (1867-1868), 1285 (1868-1869), 1286 (1869-1870), 1287 (1870-1871), 1288 (1871-1872), 1289 (1872-1873), 1290 (1873-1874), 1291 (1874-1875), 1292 (1875), 1293 (1876), 1294 (1877), 1295 (1878), 1296 (1878-1879), 1297 (1879-1880), 1298 (1880-81), 1299 (1881-1882), 1300 (1882-1883), 1301 (1883-1884), 1302 (1884-1885), 1303 (1885-1886), 1304 (1886-1887), 1305 (1887-1888), 1306 (1888-1889), 1307(1889-1890), 1308 (1890-1891), 1309 (1891-1892), 1310 (1892-1893), 1311 (1893-1894), 1312 (1894-1895), Salname 1313 (1895-1896), 1314 (1896-1897), 1315 (1897-1898),1316 (1898-1899), 1317 (1899-1900), 1318 (1900-1901), 1319 (1901-1902), 1320 (1902-1903), 1321 (1903-04), 1321 (1903-04), 1322 (1904-1905), 1323 (1905-1906), 1324 (1906-1907), 1325 (1907-1908), 1326 (1908), 1327 (1909), 1328 (1910), 1334 (1915-1916): Զմոռանանք նշել, որ առանձին տարեգրքերի տեղեկությունները վերցրել ենք նաև դրանք օգտագործած որոշ հեղինակներից: Տե՛ս „Известия Кавказского отдела Императрского Русского географического общества", т. 6, Т., 1879-1881: „Приложения" (դոկտոր Ա. Մորդման). Cuinet V., La Turquie d'Asie, t. 2, Paris, 1892. Kemal H. Karpat, Ottoman Population. 1830-1914, Wisconsin, 1985.

[19] Salname-yi vilâyet-i Erzurum, Erzurum, 1287 (1870-1871), 1288 (1871-1872), 1290 (1873-1874), 1291 (1874-1875), 1293(1876):

[20] Хуршид-Эфенди, Сияхэт-намэ-и-худуд. Описание путешествия по турецко-персидской границе, СПб., 1877. Գրքում զետեղված են նաև պարսկական կոմիսարի նյութերը:

[21] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1950: «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ., այսուհետև՝ ԺԵ-1), մասն երկրորդ (1451-1480 թթ., այսուհետև՝ ԺԵ-2), մասն երրորդ (1481-1500 թթ., այսուհետև՝ ԺԵ-3), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Ե., 1955, 1958, 1967: «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1601-1620 ԹԹ., այսուհետև՝ ԺԷ-1), մասն Բ (1621-1640 ԹԹ., այսուհետև՝ ԺԷ-2), կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Ե., 1974, 1978, մասն Գ (1641-1660 ԹԹ., այսուհետև՝ ԺԷ-3), կազմեց Վազգեն Հակոբյան, Եր., 1984: «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբով Յակոբեանց», հտ. 5, Երուսաղէմ, 1971: «Մանր ժամանակագրություններ: XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հտ. 1, Ե., 1951, հտ. 2, 1956: «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1895: «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հտ. Գ, կազմեց Հ.Օգոստինոս վրդ.Սեքուլեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1983: «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հտ. Ա, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970: «Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ընծայեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ Վարագայ վանաց վանականի», Կ. Պոլիս (ա. թ.): Սահակ Ա. Մուրատեան, Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, [խմբ. Արա Գալայճեան], Երուսաղէմ, 1967: ՄՄ, ձեռագրեր թիվ 971, 1616, 1717, 2180, 3585, 3662, 4470, 4515, 5613, 6273, 6279, 6332, 6843, 8209, 9027:

ներկայացնում տարբեր ժամանակների մատյանների հիման վրա նավավար Ղազար գրչի կողմից 1824 թ. (Հայոց ՌՄՀԳ) ընդօրինակված երկը, որը նվիրված է Աղթամարի կաթողիկոսությանը[22]: Գործում հանդիպող Աղթամարի կաթողիկոսության թեմերի մանրամասն շարքը, որի հաստատումը բացահայտ կեղծված կերպով վերագրվել է Գևորգ Բ Գառնեցի (877-897) կաթողիկոսին[23]:

Ատենախոսությունը շարադրելիս շահեկան տեղեկություններ ենք հանդիպել 19-րդ դ.-20-րդ դ. սկզբի առանձին հայ հեղինակների ուղեգրական գործերում: Մասնավորապես կարևոր են Արիստակես և Երեմիա Տևկանցների աշխատասիրությունները[24]: Հետաքրքիր և հազվագյուտ տեղեկություններ ենք քաղել Գարեգին Սրվանձտյանցի, Պետրոս ծայրագոյն Վարդապետ Կալիոկեցու, Պողոս Նաթանյանի, Մանվել Միրախորյանի և Գեղամ Տեր-Կարապետյանի (Տատրակ) գործերից[25]: Մեր ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ են նաև ազգային-ազատագրական շարժման առանձին գործիչների հուշագրություններում հանդիպող պատմաաշխարհագրական բնույթի փաստերը[26]:

Թեմային առնչվող նյութեր են սփռված հայկական պարբերական մամուլի տարբեր հրատարակություններում[27]: Կարևոր են տպագիր արխիվային փաստաթղթերի

[22] «Հաւաքարան անուանց Կաթուղիկոսաց (Աղթամարայ)», ծանօթութիւններով լոյս ընծայեաց Աղթամարեան Աթոռի հիմնարկութեան հազարամեակի (915-1915) առթիւ Մեսրոպ վ. Մաքսուդեանց, Ս. Էջմիածին, 1916: Հմմտ. Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1 (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951:

[23] Դեռ Գ. Հովսեփյանն է այդ հանգամանքին ուշադրություն դարձրել՝ այն համարելով «կեղծիք եւ ուշ ժամանակի գործ» (Գարեգին Ա Կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 192):

[24] Տևկանց Ա., Այցելություն ի Հայաստան: 1878 թ., Ե., 1985: Տևկանց Ե., Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873 թթ.), Ե., 1991:

[25] Սրվանձտյանց Գ., Երկեր, հտ. 1, Ե., 1978: Պետրոս ծայրագոյն Վարդապետ Կալիոկեցի, Ասիական ճանապարհորդութիւն ի Հայրենիս, Կ. Պոլիս, 1881: Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի եւ Երզնկայու, Կ.Պոլիս, 1883: Միրախորեան Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Մասն Ա, Կ.Պոլիս, 1884, մասն Բ և Գ, 1885: Տէր-Կարապետեան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ.Պոլիս, 1911: Նոյնի՝ Տարօնի աշխարհ, Ե., 1995:

[26] «Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց Լ.Աճէմեան, Գահիրէ, 1947: «Ասլան Ստեփանեանի յուշերը», գրի առաւ՝ Հ. Աճէմեան, Թեհրան, 1966: Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Գ հատոր: Տարօնի աշխարհը (1906), Թեհրան, 1982: Տե՛ս նաև «Վասպուրական: Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ. 1915-1930», Վենետիկ-Ս. Ղազար, 1930: «Հուշագրական ժառանգություն: «Հայ ճարտարապետության ուսումնասիրության (ՀՃՈՒ)» հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ», գիրք ԺԴ, Ե., 2011, էջ 286, 287» (Արմենակ Ամրիկյանի հուշերը հայրենի Ոզմ ավանի մասին, այսուհետև՝ Ամրիկյան):

[27] «Ազգագրական հանդէս», գիրք 25-րդ, թիվ 2, Թիֆլիս, 1914: Նոյնի՝ գիրք XXVI, Թիֆլիս, 1916: «Աշխատանք», Վան, 1911 (Բ տարի), թիւ 6: Նոյնի՝ 1912 (Բ տարի), թիւ 12(59), 1915 (Ե տարի), թիւ 14 (213): Ե., 1916 (Ա տարի), թիւ 56: 1919 (Դ տարի), թիւ 5 (213): «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1894-1895, գիրք Ա: «Արեւելեան մամուլ», Զմիւռնիա, 1879, դեկտեմբեր (թիւ 12): «Արծուի Վասպուրական», Վարագ, 1858, թիւ 11-12: «Արծագանք», Թ., 1882, № 13: 1883, № 13: «Էջմիածին», պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, 1965, թիվ Բ-Գ-Դ: «Լումայ», Տփխիս, 1897, գիրք Ա: 1898, Գիրք Բ, 1900, գիրք Ա: «Մասիս», Կ.Պոլիս, 1882, թիւ 3219, 3220: 1884, թիւ 3596: «Մուրճ»,

առանձին ժողովածուներ, որտեղից վերցրել ենք թեմային առնչվող մի շարք նյութեր[29]: Ուշագրավ են նաև Հայաստանի և սփյուռքի արխիվներում պահվող անտիպ փաստաթղթերը, որոնցից օգտագործել ենք մեզ անհրաժեշտ տվյալներ[30]:

Կարևոր տեղեկություններ են հաղորդում 19-րդ դ.-20-րդ դ. սկզբի օտարալեզու աղբյուրները: Իրենց նշանակությամբ առանձնանում են մասնավորապես ռուս հեղինակների աշխատությունները: 1849-1852 թթ. ռուսները գործուն մասնակցություն ունեցան թուրք-պարսկական միջազգային սահմանազատիչ հանձնաժողովի աշխատանքներին: Դրանց նյութերի ուշագրավ մանրամասներն ամփոփված են Ռուսաստանի կոմիսար-միջնորդ Ե. Ի. Չիրիկովի աշխատության մեջ[31]: 1870-ական թվականներից սկսում են հրապարակ իջնել ռուս դիվանագետների և բարձրաստիճան հետախույզների բազմաթիվ ուղեգրություն-հաշվետվությունները, որոնք մեր ուսումնասիրության համար պարունակում են որոշակի հետաքրքրություն ներկայացնող տվյալներ[32]: 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկզբի Վանի վիլայեթի

Թ., 1903, No 12: 1904, № 3: «Մշակ», Թ., 1915, թիւ 48: «Վան-Տոսպ», 1913, թիւ 18, 22, 33: 1914, թիւ 29:

[28] Ա-Դօ, Քիւրդ ցեղապետները.- «Հորիզոն», Թ., 1914, թիվ 288: 1915, թիւ 9: Ազիզեան Մ., Հերոսական Շատախի Արմշատ գիւղը, Պէյրութ, 1974: Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ.- «Ազգագրական հանդէս», Ե գիրք, Թ., 1899, թիւ 1: Բիւրատ Ս., Եէրլտրզէ Սասուն, Կ. Պոլիս, 1910: Իգիթբաշի, Սասուն.- «Արձագանք», Թիֆլիս, 1894, թիվ 150: Լեւոնեան Խ., Հայաստանի խորհրդէն: Ոգիմ եւ ոգմեցիք. -«Կոչնակ» շաբաթաթերթ, ԺԴ տարի, թիւ 34: Նոյնի՝ Ազատագրեալ հայ ցեղ մը: Նոյնի՝ Քրտո-հայ ցեղաբանութիւն եւ քիւրտի ցեղային յատկանիշը.- «Վան-Վասպուրական աշխարհը», Պէյրութ, 2013: Ծերուկ (Արտակ Դարբինյան - Գ.Բ.), Վանի նահանգը ներկայումս.- «Մուրճ», Թ., 1904, թիւ 3: Մարտիրոսեան Ն., Սասուն.- «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916 (Ա տարի), թիւ 13: Մելիք, Հերոսական գիւղ մը.- «Վարագ» պարբերաթերթ, Պոսթըն, 1958, թիւ 21: Մովսիսյան Ս. (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ).-«Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 3, Եր., 1972: Պետոյան Վ., Սասունի և Տարոնի պատմաաշխարհագրական տեղադրությունը, Ե., 2005: Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1957: Սեյլան (Ա. Մատոյան), Սասուն, Ե., 1990: Лисициан С.Д., Историко-этнографические очерки Шатаха.- "Известия Кавказского Историко-археологического института", том V, Тифлис, 1927:

[29] «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք ԺԳ: Հարստահարութիւններ Տաճկահայաստանում (վաւերագրեր 1801-1888), յաւելուածներով, ծանօթութիւններով եւ բառգրքով հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1915: «Հայոց Ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ (փաստաթղթերի ժողովածու), հտ. 1. Վանի նահանգ, Ե., 2012: «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի», Կ.Պոլիս, 1878:

[30] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ). Ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 111: Ֆ. 412, ց. 1, գ. 1856: Ֆ. 227, ց. 1, գ. 429: Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ). ֆ., Ա-Դոյի արխիվ, գ. 839/143-1: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ). Տիգրան Չիթունու ֆ., գ. 2 (ԺԶ տետր): Թ. Ազատյանի ֆ., բաժին III, գ. 57: Բաժին IV, գ. 224: Շ. Կուժիկյանի ֆ., 3ա, տետր 6-7, 11, 13, 18: Ֆ. 3բ, տետր 35: ՀՅԴ Բոստոնի արխիվ, «Անձնական գրութիւններ: ՀՅԴ Բոստոնի արխիվ, Տէր-Կարապետեան Գեղամի (Տատրակ) ֆ.», պահոց 16, դարակ 1, № 1966/131:

[31] Чириков Е.И., Путевой журнал Е.И. Чирикова, русского комисара – посредника по турецко – персидскому разграничению. 1849-52, СПб., 1875.

[32] Малама Я.Д., Несториане и округ Хаккери.-,,Известия кавказского отдела Императорского Русского географического общества", Т., 1873, т. 2: ,,Приложения". Նույնի՝ Описание Эрзерумского виляета, СПб., 1874. Филиппов В.Н., Военно-топографический и стратегический обзор северо-восточных

վարչական կառուցվածքի ուսումնասիրության համար իրենց ուրույն տեղն են գրավում Վանում Ռուսական կայսրության փոխհյուպատոսներ Ա.Մ. Կոլյուբակինի և Վ.Տ. Մայևսկու աշխատությունները[33]: Հատկապես կարևորվում են վերջինիս գործերը[34]: Իր ուղևորությունների ընթացքում հեղինակը թողել է նաև Հաքարիի ուշագրավ նկարագրությունը[35]: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում 1909-1914 թթ. թուրք-պարսկական հերթական տարածքային վեճը լուծելու համար ստեղծված սահմանազատիչ միջազգային հանձնաժողովի աշխատանքների տվյալները, որոնք ներկայացված են առանձին երկհատորանի աշխատությունում[36]: Առաջին աշխարհամարտի նախօրյակին թուրք-պարսկական սահմանի (այդ թվում՝ Վանի վիլայեթի արևելյան սահմանագծի) հետ կապված առանձին հարցեր լուսաբանել ենք ռուսական հետախուզական ծառայության կողմից հրատարակվող տեղեկագրերի տվյալների[37], իսկ 20-րդ դարասկզբին վիլայեթում ստեղծված քաղաքական և վարչական իրավիճակը՝ Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության և Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվների պահոցներում պահվող նյութերի հիման վրա[38]: Թեմայի առնչությամբ շահեկան տեղեկություններ են հանդիպում բրիտանացի դիվանագետների և հետախույզների գործերում: Այս առումով ուշագրավ են Լ. Ռիչի, Ու. Էյնսուորթի, Գ. Բեջերի, Ջ. Թեյլորի, Հ. Փերսիի (լորդ Ուարքուորթ) և Հ. Լինչի գործերում[39]:

провинций Азиатской Турции, СПб., 1874. Гиппиус А.И., Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью.- Приложение ко 2-му выпуску т. 9 „Известий Кавказского отдела Императорского Русского географического общества", Т., 1889. Նույնի՝ Отчёт о поездке 1889 года, Т., 1892. Термен Р. И., Отчёт о поездке в санджак Хакиари Ванского вилайета в 1906 году, Т., 1910.

[33] Колюбакин А.М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 1, часть 1, Т., 1888. Т. 8, ч. 2, 1890. Маевский В.Т., Ванский вилает. Военно-статистическое описание, Т., 1901. Նույնի՝ Военно-статистичекое описание Ванского и Битлисского вилаетов, Т., 1904 (այսուհետև՝ МВБ). Աշխատությունը կազմված է առանձին ինքնուրույն հատվածներից, որոնցից հիմնականում օգտվել ենք հետևյալ մասերից. „Географический очерк" (այսուհետև՝ ГО), „Статистические данные о населении" (այսուհետև՝ СДН):

[34] МВБ, СДН, с. 1-159.

[35] Маевский В.Т., Несториане Ванского вилайета. Поездка 1898 года.- ,,Известия штаба Кавказского военного округа", № 35-36, Тифлис, 1913.

[36] ,,Материалы по изучению Востока'', выпуск 1, СПб., 1909. Նույնի՝ выпуск 2, Петроград, 1915.

[37] „Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой за время с 1-го марта по 1-ое апреля 1912г.'', №№ 19/20, Т., 1912.

[38] Архив внешней политики Российской Империи (այսուհետև՝ АВПРИ), ф. ,,Политархив", опись 482, дело №№ 715, 716. Ф. ,,Посольство в Константинополе", оп. 517/2, д. №№ 1566, 1571, 1590, 1603, 1605. Российский государственный военно-исторический архив (այսուհետև՝ РГВИА), ф. 450, оп. 1, д. № 141: Ф. 1300, оп. 10, д. № 446:

[39] Rich L. C. J., Narrative of a Residence in Koordistan and on the Site of Ancient Nineveh, by the Late Claudius James Rich, vol. 1, L., 1836. Ainsworth W.F., Travels and Researches in Asia-Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, vol. 2, London, 1842. Badger G.P., Nestorians and their Rituals, vol. 1, L., 1852. J. G. Taylor, Travels in Kurdistan, with Notices of the Sourses of the Eastern and Western Tigris, and Ancient Ruins in Their Neibourhood. – Journal of the Rojal Geographical Society of L., volume 35, 1865 (կից՝ քարտեզով). [Lord Warkworth], Notes from a Diary in Asiatic Turkey by Lord Warkworth, M.P., L., 1898. Percy E., Highlands of Asiatic Turkey, L., 1901 (կից՝ քարտեզով). Линч Х.Ф.Б., Армения Путевые очерки

Պատմաաշխարհագրական բնույթի ուսումնասիրությունների պարագայում խիստ կարևոր նշանակություն ունեն քարտեզագրական, մասնավորապես՝ տոպոգրաֆիական աղբյուրները (պլանշետները): Մեր կողմից օգտագործվել են ցարական 5-վերստանոց քարտեզի առանձին հատվածներ[40]: Այդ տեսանկյունից, սակայն, բացառիկ կարևորություն ունեն ռուսական հետախուզության կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին ձեռք բերված թուրքական շտաբային քարտեզները[41]: Այդ պլանշետները, արդեն լատինատառ, հրատարակվել են նաև 1960-ական թթ. Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում (ԳՖՀ, Արևմտյան Գերմանիա)[42]: Օգտագործել ենք նաև նշված տարածքի բրիտանական առանձին պլանշետներ, որոնք կազմվել են 1901-1916 թթ.[43]: Որոշ հարցեր ճշտել ենք խորհրդային բանակի գլխավոր շտաբի հրատարակած համապատասխան պլանշետների հիման վրա[44]: Օգտվել ենք նաև ԽՍՀՄ-ի Գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր վարչության (ԳՈՒԳ) հրատարակած Թուրքիայի տեղեկատու քարտեզից[45]:

Հայագիտության մեջ Վանի էյալեթի (վիլայեթի) վարչաքաղաքական համալիր ուսումնասիրությունը, ըստ էության, բացակայում է: Այդ առումով առավել ամբողջական աշխատություն կարելի է համարել նշանավոր հայագետ Ղ. Ինճիճյանի գործը[46]: Հեղինակը հանգամանալից կերպով ներկայացրել է ոչ միայն իր ապրած ժամանակի (18-րդ դ. 2-րդ կես) Հայաստանի երկու հատվածների, այդ թվում՝ Վանի էյալեթի, վարչական իրավիճակը, այլև հարկ եղած դեպքում անդրադարձ կատարել նախորդ դարերին գոյություն ունեցած որոշ հարցերի: Ականավոր պատմաբան և արևելագետ Մ. Զուլալյանն այս աշխատությունը կոչել է Արևմտյան Հայաստանի «հանրագիտարան»[47]: Ժամանակագրական մեծ խզումով կարելի է հիշատակել նաև գերմանացի արևելագետ Ա. Բիրքենի աշխատությունը, որն ընդգրկում է 16-րդ դարից 20-րդ դարասկիզբ հասնող հիմնական սկզբնաղբյուրների, այդ թվում՝ թուր-

---

և էտյուդներ, հ. 2, Թ., 1910 (կից՝ քարտեզով, օգտագործել ենք աշխատության ռուսերեն թարգմանությունը): Տե՛ս Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության: Ուղեգրություններ, հ. Զ, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Յերևան, 1934:

[40] Ռուսական 5 վերստանոց քարտեզ, Д-9 պլանշետ (մասշտաբ՝ 1:5 վերստ կամ 1:210 000):

[41] „Копия турецкой карты Азиатской Турции, изданной в масштабе 1:200 000 в 1330 году Гиджры, т.е. в 1911-12 годах", [Тифлис], 1915-17, масштаб 1:210 000: Օգտվել ենք **III**- 16-17, **IV**- 16-17 և **V**- 16-18 պլանշետներից: Դրանց թարգմանությանն իր գործուն մասնակցությունն բերել հայ հասարակական նշանավոր գործիչ Հակոբ Զավրիյանը (Զավրիև): Ի դեպ, վերոհիշյալ քարտեզի բնագիր որոշ օրինակներ այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանում:

[42] „Codex Kulturatlas: Türkei", Teil 9 und Teil 10, Gundohlzen, 1966 (մ.՝ 1: 300 000). Վերոհիշյալ քարտեզներն օգտագործվել են ժամանակակից Թուրքիայի տարածքի պատմա-մշակութային հուշարձաններն ընթերցողի ուշադրությանը ներկայացնելու նկատառումներով:

[43] ,,Eastern Turkey in Asia", redrawn from Turkish Staff Map 1:200 000 at the Ordinance Survey Office, Scale 1:250 000, Sheets 18-20, 26-27.

[44] ,,Генеральный штаб Советской Армии" , 1981 (м. 1:200 000), պլանշետներ 10-38-13, 10-38-16, 10-38-21:

[45] „Турция. Справочная карта" (м. 1:20 000 000), М., 1986.

[46] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ.:

[47] Զուլալյան Մ.Կ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Ե., 1980, էջ 11:

քական առանձին տարեգրքերի, տեղեկությունները[48]: Ուշագրավ է արևելագետ, թարգմանիչ Ա. Սաֆրաստյանի ուսումնասիրությունը, որը նվիրված է 17-րդ դ. օսմանյան վարչական բաժանումների համակարգին[49]: Վաղ շրջանի Վանի էյալեթի (16-17դդ.), նաև՝ հարակից տարածքների վարչա-քաղաքական մի շարք հարցեր քննարկված են Ի. Պետրուշևսկու և Մ. Սվանիձեի աշխատություններում[50]: Թեմային վերաբերող ընդգրկուն այլ աշխատություններ մեզ այլևս հայտնի չեն: Որպես կանոն, Վանի էյալեթի (վիլայեթի) ուսումնասիրությանն անդրադարձած հեղինակների հետազոտությունները վերաբերում են միայն որոշակի ժամանակահատվածի: Այսպես, ականավոր հայագետ Ղ. Ալիշանի որոշ աշխատություններում լուսաբանված են միայն 1850-ական թթ. վարչական բաժանումն ու կացությունը[51]: Թանզիմաթի ժամանակահատվածի վարչական իրավիճակին են նվիրված ֆրանսիացի Մ. Ա. Ուբիչինիի երկու աշխատությունները (երկրորդը՝ Պ. դե Կուրտեյլի հետ համատեղ)[52]: 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկզբի Վանի վիլայեթի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ ենք հանդիպել ռուսալեզու այնպիսի գործերում, ուր ներկայացված է տարածաշրջանի աշխարհաքաղաքական և վիճակագրական իրադրությունը[53]: Հարկ է նշել նաև հայտնի հայ հասարակական-քաղաքական գործիչ Ա-Դոյի (Հ. Տեր-Մարտիրոսյան) և արևելագետ Ե. Սարգսյանի(Սարկիսով) որոշակի ավանդը թեմայի ուսումնասիրության ասպարեզում[54]: Հետաքրքիր են Վանի վիլայեթի տարբեր հատվածներին նվիրված հետազոտությունները[55]: Հաբա-

---

[48] Birken A., Die Provinzen des Osmanische Reiches, Wiesbaden, 1976.

[49] Սաֆրաստյան Ա.Խ., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 17-րդ դ. (պատմական ակնարկ).- «Արևելագիտական ժողովածու», հ. 1, Ե., 1960:

[50] Петрушевский И.П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX веках, Л., 1949. Сванидзе М.Х., О юрдлуках и оджаклыках как одной из форм землевладения в Османской империи (на примере Чилдырского эялета), М., 1966.

[51] Ալիշան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1853: Նույնի՝ Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ -Ս. Ղազար, 1855:

[52] „Lettres sur la Turquie ou Tableou statistique, religieux, politique, admnistratif, militaire, commercial, etc. de l'Empire Ottman, depuis le Khatti-Cherif de Gul Khanė (1839)", par M.A. Ubicini, première partie: Les Ottomans, Paris, 1853. Убичини А. и Де-Куртейль П., Современное состояние Оттоманской империи. Статистика, правление, администрация, финансы, армия, общины не-мусульманские и пр., СПб., 1877.

[53] Ерицов А.Д., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Т., 1881. Грязнов Ф., Военный обзор передового театра в Азиатской Турции, часть 1, Т., 1895; ч. 2, 1897. Аверьянов П.И., Курды в войнах России с Персией и Турцией в течении XIX столетия. Современное политическое положение Турецких и Русских курдов, Т., 1900. Նույնի՝ Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912.

[54] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները: Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան, Ե., 1912: Նույնի՝ Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Ե., 1917: Саркисян Е.К., Административная и демографическая политика османского правительства в Западной Армении.- «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Ե., 1970:

[55] Սերինե (Ս. Ավագյան), Արճակ. - «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 8, Ե., 1978: Սսս-Վանի, Ճանչնանք մեր հայրենիքը: «Վասպուրական մեր աշխարհ», Աթէնք, 1938: Орбели И.А., Фольклор и быт Мокса, М., 1982. Նույնի՝ Избранные труды в двух томах, том II, Е., 2002.

րիի և վերջինիս բաղկացուցիչ մասը համարվող «Ասորական մարզի» ուսումնասիրությամբ զբաղվել են ազգագրագետ Երվանդ Լալայանը, ինչպես նաև այլալեզու առանձին հեղինակներ[56]:

Նման աշխատության համար մեծ նշանակություն ունի պատմական թեմատիկ քարտեզագրությունը: Ատենախոսությունը շարադրելիս օգտագործել ենք 19-րդ դ. որոշ քարտեզներ, որոնք վերցրել ենք Ռ. Գալչյանի կողմից հրատարակված ժողովածու-ատլասից[57]: Վերջին տասնամյակներին թեմային առնչվող պատմական մի շարք քարտեզներ են տպագրել նաև U.S. Երեմյանը և Բ.Հ. Հարությունյանը[58]: Աշխատության համար շահեկան են եղել անգլիացի հետազոտող Դ.Է. Փիթչերի Օսմանյան կայսրության պատմական աշխարհագրությանը նվիրված ատլասը:[59]

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև երկու հավելվածից ու քարտեզներից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության ստեղծման անհրաժեշտությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և հիմնախնդրին վերաբերող ուսումնասիրությունները:

Առաջին գլուխը վերնագրված է **«Վանի էյալեթի վարչա-տարածքային կառուցվածքի և սահմանների ձևավորումը»** և բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում, որը կրում է **«Օսմանյան տիրապետության հաստատումը և վարչատարածքային բաժանումն Արևմտյան Հայաստանում»** խորագիրը, խոսվում է Օսմանյան կայսրության նվաճումների և, որպես հետևանք, հայկական տարածքներում նոր վարչամիավորների՝ էյալեթների, ձևավորման մասին: Վանի էյալեթի վարչական կառուցածքն աչքի էր ընկնում որոշակի առանձնահատկությամբ, քանի որ հիմնականում կազմված էր կիսանկախ քրդական հուքյումեթներից և ժառանգական օջաքլըք կամ յուրդլուք սանջակներից: Որպես հայոց պետականության բեկորներ պահպանվել էին նաև մի շարք հայկական իշխանություններ և մելիքություններ:

[56] Լալայեան Ե., Վասպուրականի ասորիները, Թիֆլիս, 1913: Badger G.P., Nestorians and their Rituals, vol. 1, L., 1852. Думбас, Айсоры.- „Новый Восток", М., 1923. Luke H.C., Mosul and its Minorities, L., 1925. [Mark Sykes], „The Caliphs' Last Heritage", by Mark Sykes, New York, 1973.

[57] Գալչեան Ռ., Հայաստանը համաշխարհային քարտէզագրութեան մէջ, Ե., 2005:

[58] Երեմյան U. S., Ղազարյան Հ.Մ., Հայաստանը և հարևան երկրները 1860-1870 թթ., մասշտաբ՝ 1:20 000 000.- «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Ե., 1974: «Հայաստանը XVI դարում», մ.՝ 1: 3 000 000, էջ 86-87: «Հայաստանը XVII դարի առաջին կեսին», մ.՝ 1:3 000 000, էջ 88-89 - Հարությունյան Բ.Հ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Ե., 2004:

[59] Pitcher D. E., An Historical Geography of the Ottoman Empire from the earliest times to the end of the sixteenth century, with detailed maps to illustrate the expantion of the Sultanate, Leiden, 1981.Օգտվել ենք հետևյալ քարտեզներից. Map XXV „Anadolu", scale 1: 20km, map XXI: "Caucasia", scale 1: 50 km, map XXXII: "Syria, Mesopotamia and Kurdistan", scale 1: 50km:

Երկրորդ ենթագլխում՝ «Վանի էյալեթի ստեղծումը և նախնական վարչատարածքային բաժանումը (1548-1555 թթ.)», քննարկվում է Վանի էյալեթի ստեղծումը թուրք-պարսկական պատերազմների ընթացքում (1548 թ.) և երկրամասի ամենավաղ շրջանի վարչական կառուցվածքը: Ուշագրավ է, որ Վանի էյալեթի վարչամիավորների հիմնական մասը հիշատակվում է նաև 16-17-րդ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում՝ որպես կանոն «երկիր» կամ «գաւառ» բառակապակցություններում: Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ մինչև Ամասիայի պայմանագրի կնքումը (1555 թ.) Վանի էյալեթի սահմանները ձգվել են Վասպուրականի (Կոթուրի կամ Ղոթուրի) և Զագրոսի լեռնաշղթաներից զգալիորեն արևելք՝ ընդգրկելով պատմական Արտազը (Մակու), Ճվաշռոտը (Չորս-Զիյաեդդին) և ողջ Պարսկահայքը, իսկ հյուսիսում հասել Արարատյան դաշտ և Շիրակ (Շորագեր):

Երկրորդ գլուխը կրում է **«Վանի էյալեթը 16-րդ դ. երկրորդ կեսին-19-րդ դ. առաջին կեսին»** խորագիրը և ունի երեք ենթագլուխ: Առաջին ենթագլխում՝ **«Վանի էյալեթի սահմանները և վարչական ներքին բաժանումը 1555 թ.-1840-ական թթ.»**, խոսվում է Ամասիայի, այնուհետև՝ Կասր-է Շիրինի պայմանագրերով հաստատված միջպետական սահմանների, ինչպես նաև՝ Վանի էյալեթի ներքին վարչական բաժանման մասին: Վերջինս, փաստորեն, նշված ժամանակահատվածում, որոշակի փոփոխություններով, պահպանվել է շուրջ երեք դար: Պետք է նկատի ունենալ, որ միջավատատիրական կռիվներն ինչպես քուրդ ցեղապետերի, այնպես էլ վերջիններիս և օսմանյան իշխանությունների միջև իրենց զգալի ազդեցությունն են թողել Վանի էյալեթի վարչական բաժանման և արևելյան սահմանների վրա, որոնցով, ինչպես հայտնի է, ձգվում էր թուրք-պարսկական պետական սահմանագիծը: Դրա հետևանքով բազմիցս՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ, տերությունների միջև տարածքային վեճեր և բախումներ են ծագել:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հայկական կիսանկախ իշխանությունները, մելիքությունները և ինքնավար համայնքները», իր հերթին կազմված է երեք ենթահարցից՝ **Սասունի հայկական իշխանությունը, Մոկսի և Շատախի մելիքությունները** և **Հայկական այլ մելիքություններ և ինքնավար համայնքներ:** Դրանցում ներկայացված են Վանի էյալեթի տարածքում պահպանված հայկական կիսանկախ իշխանությունների, մելիքությունների և ինքնավար համայնքների վարչաքաղաքական կացությունը: Ուսումնասիրությունից պարզվել է, որ Սասունի իշխանությունը և Շատախի մելիքությունը եղել են համադաշնություններ՝ գերագահ տոհմերի և վերջիններիս ենթակա ավելի փոքր ընտանիքների առկայությամբ: Ընդ որում, Շատախի և Մոկսի մելիքները թեև ենթարկվել են Հաքարիի հուքյումեթին, սակայն ունեցել են մեծ ինքնիշխանություն: Ուշագրավ կառուցվածք է ունեցել նաև Շատախի Արմշատ գյուղը, որը ժառանգական տանուտիրություն էր («գյուղապետութիւն»): Մոկսի մելիքության վերաբերյալ պահպանվել են խիստ սակավ տեղեկություններ միայն Ղ. Ինճիճյանի շնորհիվ: Հայտնի է, որ Մոկսը հզորացել է 18-րդ դ. 2-րդ կեսին, երբ տեղի մելիք Հովհաննեսը (Հովիկ) դարձել է Հաքարիի քուրդ խանի «փոխանորդը»: Երրորդ կետում խոսվում է Վանի էյալեթի տարածքով սփռված փոքր մելիքությունների և ինքնավար համայնքների մասին,

որոնք ընդգրկել են մեկ կամ մի քանի բնակավայր: Դրանք ցրված էին Մշո դաշտից և Բուլանուխից (Հարք) մինչև Վանա լճի հյուսիսային շրջաններ: Եղել են նաև հայ-քրդական համատեղ կառավարվող իշխանություններ, որոնցից առավել նշանավորը Խութն էր:

Երրորդ ենթագլուխը կրում է «**Քրդական կիսանկախ իշխանությունները (հուքյումեթները)**» խորագիրը և ունի հինգ ենթահարց, որտեղ բացահայտված են Վանի էյալեթի տարածքում 16-րդ դ.-19-րդ դ. 40-ական թթ. գոյություն ունեցած քրդական կիսանկախ իշխանությունների կամ հուքյումեթների սահմանների և վարչական բաժանումների հետ առնչվող հարցերը: Հուքյումեթները սկզբնապես հինգն էին՝ Բիթլիսի, Մահմուդիի (Խոշաբ), Հաքարիի (Ջուլամերկ կամ Ջուլամերիկ), Խիզանի և Փինյանիշի: Նշված իշխանությունների միջև եղել են կարգավիճակային որոշակի տարբերություններ: Առաջին 3-ը թե՛ իրենց տարածքով, թե՛ հզորությամբ և կարգավիճակով, խաների կողմից կառավարվող կիսանկախ իշխանություններ էին, որոնց ընդգրկումը Վանի էյալեթի մեջ ձևական բնույթ ուներ: Ընդհակառակը, բեյերի կողմից կառավարվող Խիզանն ու Փինյանիշը, փաստորեն, չեն տարբերվել օջաքլըք կամ յուրդլուք սանջակներից, և հաճախ ընդունել են հզոր հարևանների գերիշխանությունը: 18-րդ դ. սկզբին Փինյանիշը մասնատվել է Հաքարիի և Բրադոստի իշխանությունների միջև: Նույն դարի 1-ին կեսին Բիթլիսի արևմտյան մասում ձևավորվել է Մշո իշխանությունը: Քրդական վաչկատուն ցեղերի անընդմեջ կրկնվող ասպատակությունների և Վանի փաշաների արշավանքների հետևանքով 18-րդ դ. վերջին ոչնչացել և Մահմուդիի կազմից դուրս է մնացել Չոբանյանների (Չոբան-օղլուներ) եզդիական իշխանությունը:

Երրորդ գլուխը՝ «**Վանի էյալեթը (վիլայեթը) 1840-ական թթ. մինչև 1914 թ.**», բաղկացած է երեք ենթագլուխներից: Դրանցից առաջինում՝ «**Վանի էյալեթը 1840-ական թվականներից մինչև 1877 թ.**», ներկայացված են այն էական փոփոխությունները, որոնք կատարվել են Բարձր Դռան կողմից նշված ժամանակահատվածում: Երբեմնի կիսանկախ կամ ինքնավար, այդ թվում՝ հայկական, կազմավորումների վերացման արդյունքում, Արևմտյան Հայաստանում աստիճանաբար ձևավորվել են վարչատարածքային սովորական վարչամիավորներ, որոնց գլուխ կանգնած էին կենտրոնից նշանակվող պաշտոնյաներ: Մշտական փոփոխությունների հետևանքով նկատելիորեն կրճատվել են նաև Վանի էյալեթի սահմանները: Ընդ որում, 19-րդ դ. 60-ական թթ. կեսերից, ձգտելով կասեցնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների ուժգնացող ազատագրական պայքարը, Բ. Դուռը որդեգրել է մի քաղաքականություն, որի հիմնական սկզբունքներից էր նվաճված երբեմնի թագավորությունների կամ երկրների սահմաններին «համապատասխանող» նոր վարչամիավորների՝ վիլայեթների, ստեղծումը: Այդ նպատակով 1866 թ. Վանի էյալեթը լուծարվել, իսկ համանուն և Հաքարիի սանջակներն ընդգրկվել են նորաստեղծ Էրզրումի վիլայեթի մեջ (մինչև 1876 թ.): Այս քայլով ստեղծվել է մեկ վարչամիավորի մեջ հայաբնակ հիմնական տարածքների համախմբման պատրանք:

Երկրորդ ենթագլուխը կրում է «**Վանի վիլայեթի վարչական բաժանումը 1877-1914 թթ.**» վերնագիրը: 1870-ական թթ. վերջից Վանի վիլայեթի վարչատարածքային կառուցվածքը ենթարկվում է վերջնական և արմատական փոփոխությունների, ինչը կապված էր տարածաշրջանում Ռուսական կայսրության դիրքերի հետագա ամրապնդման և հայկական հարցի միջազգայնացման հետ: Օսմանյան պետությունը տենդագին կերպով 1870-ական թթ. վերջից սկսել է իրականացնել վարչական և ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն՝ ամեն կերպ կասեցնելու հայկական բարեփոխումների իրականացման ծրագիրը: 1877-1893 թթ. Վանի վիլայեթի սահմանները պարբերաբար կրճատվել են, իսկ հիմնականում նրա կազմից հանված վարչամիավորներից ձևավորվել է Բիթլիսը: Արդյունքում Առաջին աշխարհամարտի նախօրեին 33631 կմ^2 տարածք զբաղեցնող վիլայեթը պարփակվել է Վանա լճի և Մեծ Զաբ գետի ավազաններում՝ մինչև թուրք-պարսկական սահմանագլուխ:

Երրորդ ենթագլխի վերնագիրն է «**Բնակավայրերի ցանցի ձևավորման պատմությունը: Վանի վիլայեթի բնակավայրերի քանակն առաջին աշխարհամարտի նախօրեին»,** ուր խոսվում է երկրամասի տարածքում բնակավայրերի ցանցի ձևավորման հիմնական միտումների մասին: Այդ գործընթացում առանձնակի բացասական դերակատարում են ունեցել ինչպես 16-17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմները, այնպես էլ քրդական իշխանությունների միջցեղային կռիվներն ու ընդհարումները, 16-րդ դարից Հյուսիսային Միջագետքից և Իրաքից երկրամասի տարածքը հեղեղող քուրդ վաչկատուն ցեղերի ընթացող տեղաշարժերն ու վիլայեթի տարածքում աստիճանական հաստատումը: Աղետալի էին նաև թուրքական պետության կազմակերպած արշավանքները, որոնք գագաթնակետին են հասել 1847-1849 թթ.: Հիմնականում այս գործոնների ազդեցությամբ է ձևավորվել Վանի վիլայեթի բնակավայրերի ցանցը: Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, 20-րդ դ. սկզբին երկրամասն ուներ 2042 բնակավայր, որից 1121-ը՝ Վանի, 921-ը՝ Հաքարիի սանջակներում:

Ատենախոսությունը եզրափակում են երկու հավելվածներ: Առաջինում ներկայացված է Վանի վիլայեթի վարչական ներքին կառուցվածքը 1888-1891 թթ., իսկ երկրորդում՝ հայաբնակ քաղաքային և գյուղական բնակավայրերի ցուցակը 1914 թ.: Ներկայացված են նաև երկու քարտեզ՝ «Վանի էյալեթը 16-րդ դ.-19-րդ դ. 1-ին կեսին» (մասշտաբ՝ 1:1400000) և «Վանի վիլայեթը 1914 թ.» (մասշտաբ՝ 1:1200000):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ տրված են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

1. Վանի էյալեթը 1548-1555 թթ. ամբողջությամբ կամ մասամբ ընդգրկել է պատմական Մեծ Հայքի Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Պարսկահայք, Կորճայք նահանգները, ինչպես նաև Աղձնիքի և Այրարատի հարավ-արևելքը: Հետագայում, մասնավորապես 17-րդ դ. կեսերին Վանի էյալեթի տարածքը կազմել է շուրջ 50000 կմ^2 տարածություն: Ընդ որում, շուրջ 41000 կմ^2-ը բաժին էր հասնում քրդական ժառանգական հուքյումեթներին, օջաքլըք-յուրդլուք սանջակներին և հայկական կիսանկախ իշխանություններին ու մելիքություններին: Վանի բեյլերբեյի

և օսմանյան միրլիվաների կամ սանջակբեյերի իրական իշխանությունը տարածվել է միայն առանձին, հիմնականում՝ Վանա լճի ափամերձ սանջակների վրա (շուրջ 8700 կմ²): 18-րդ դ. սկզբին, երբ Վանի կազմից հանվել և հարևան Էրզրումի էյալեթին է հանձնվել Բայազետի ընդարձակ սանջակը, Վանի էյալեթի հյուսիս-արևելյան սահմանները սկսել են անցնել Ծաղկանց կամ Ալադաղի լեռների արևելյան ճյուղավորումներով՝ մինչև Թափարիզի (պատմ. Դառնիի կամ Գառնիի) լեռնանցք, իսկ էյալեթի տարածքը մինչև 19-րդ դ. 1-ին կեսը կազմել է շուրջ 46700 կմ²:

2. Վանի էյալեթի կարևորագույն առանձնահատկություններից մեկը հայկական կիսանկախ իշխանությունների և մելիքությունների, ինչպես նաև ինքնավար համայնքների գոյությունն էր ընդհուպ մինչև 19-րդ դ. առաջին կեսը: Հատկանշական է, որ Արևմտյան Հայաստանի տարածքում նման միավորումների մեծ մասը հանդիպել է հենց Վանի էյալեթի տարածքում: Գոյություն են ունեցել բավական մեծ տարածք զբաղեցնող և նշանակալի զորական ուժ ունեցող իշխանութուններ, որոնք ներքին հարցերում գրեթե ինքնիշխան են եղել: Այդպիսին էր Սասունը, որը 18-19-րդ դդ. մտել է Վանի էյալեթի կազմի մեջ: Եղել են նաև համեմատաբար փոքր ներուժ ունեցող մելիքություններ, որոնք, ընդունելով հարևան մահմեդական իշխանությունների գերակայությունը, ներքին կյանքում օգտվել են զգալի ինքնուրույնությունից, ընդհուպ՝ ռազմական որոշակի քանակությամբ ուժեր պահելու արտոնությունից: Դրանց շարքում առանձնանում են Շատախի և Մոկսի մելիքությունները: Վանի էյալեթի տարածքում եղել են նաև այլ հայկական ինքնավարություններ՝ Թարխանցիների և Զիրաքցիների մելիքությունները Վանա լճի հյուսիսարևմտյան ափերին, Բաղլուի մելիքությունը Մուշում, մելիքների կողմից կառավարվող Յոնջալուի կամ Առվտնոցի և Լիզի (2-ն էլ՝ Բուլանուխում), Գործոթի (Բերկրի) ինքնավար համայնքները, Շատախի Արմշատ գյուղի ժառանգական տանուտերությունը: Առանձնահատուկ կարգավիճակ են ունեցել նաև Հաքարիի տարածքում 14-րդ դ. վերջից հաստատված նեստորական ասորիները: Վերջիններիս «Ասորական մարզ» անունը կրող բնակության շրջանն ընդգրկել է Մեծ Զաբ գետի միջին ավազանում գտնվող մի շարք գավառներ, որոնք մինչև 1915 թ. հոգևոր-քաղաքական առումով ենթարկվել են նեստորական կաթողիկոսին՝ մարշիմոնին, կառավարվելով մելիքների կողմից:

3. Մինչև 1840-ական թթ. վերջը Վանի էյալեթի, նաև՝ Արևմտյան Հայաստանի տարածքի մի զգալի մասի, վարչական բաժանման ևս մի կարևոր առանձնահատկություններից էր քրդական կիսանկախ իշխանությունների՝ հուքյումեթների, գոյությունը: 14-րդ դ. կեսերից պատմական Աղձնիք, Վասպուրական, Կորդուք-Կորճայք և Տուրուբերան «աշխարհների» տարածքներում հաստատված քրդական, իսկ երբեմն՝ եզդիական, առանձին ցեղախմբերի վերնախավին հաջողվել է հետզհետե ձևավորել ինքնուրույն իշխանություններ, որոնք աննշան փոփոխություններով վերահաստատվել են 16-րդ դ. Բարձր Դռան կողմից: Վանի էյալեթի տարածքում 16-րդ դ.-19-րդ դ. 40-ական թթ. գոյություն են ունեցել Բիթլիսի (Բաղեշի), Հաքարիի (Ջուլամերկի), Մահմուդիի (Խոշաբի) և Խիզանի հուքյումեթները: Փինյանիշի հուքյումեթն ամենայն հավանականությամբ 18-րդ դ. կեսերին, մասնատվել է

Հաքարիի և Բրադոստի միջև: 18-րդ դ. 1-ին կեսին Բիթլիսից առանձնացել է նաև Մուշը, որը թեև պաշտոնական փաստաթղթերում նշվում է որպես սանջակ, սակայն իրականում փաշայի տիտղոս կրող ավատատերերի կողմից կառավարվող ինքնուրույն ժառանգական իշխանություն էր: 17-րդ դ.-18-րդ դ. կեսերին Վանի էյալեթի տարածքի շուրջ 2/3-ը՝ ավելի քան 32000 կմ², բաժին էր հասնում քրդական հուքյումեթներին, որոնցից Մահմուդիի և Հաքարիի իշխողների վերահսկողության ներքո է գտնվել Վանի էյալեթի ողջ արևելյան, այն է՝ թուրք-պարսկական պետական սահմանագիծը: Քրդական հուքյումեթների շարքում առանձնանում է Հաքարին, որը, ըստ էության, քրիստոնեա-մահմեդական իշխանություն էր:

4. 1830-ական թվականներից, փորձելով փրկել խորը ճգնաժամի մեջ հայտնված կայսրությունը, սուլթանական կառավարությունը ստիպված էր գնալու որոշակի զիջումների, որով սկսվում է Թուրքիայի պատմության թանզիմաթյան ժամանակաշրջանը, երբ կայսրությունը հետևողական կերպով ձեռնամուխ է լինում խարխլելու շուրջ 3,5 դար գոյատևած ռազմաավատատիրական վարչական համակարգը՝ այն փոխարինելով պետական պաշտոնյաների կողմից կառավարվող սովորական տարածքային բաժանումներով: Այդ գործընթացը տևել է ավելի քան կես դար: Բացի այդ, թուրքական իշխանությունների բացահայտ ուղղորդմամբ ու աջակցությամբ Հյուսիսային Միջագետքից և ժամանակակից Իրաքի հյուսիսային շրջաններից դուրս եկած քրդական ցեղերի նոր ալիքը ողողել է Վանի էյալեթի տարածքի զգալի մասը՝ հիմնովին փոխելով տեղի ազգացեղային նկարագիրը: Նշված ժամանակաշրջանում նկատելի է նաև Վանի էյալեթի կազմում գտնվող հարավարևմտյան և արևմտյան հայաշատ շրջաններն այլ վարչամիավորների մեջ ներմուծելու միտումը, որը հետագա տասնամյակներին վերաճել է որոշակի քաղաքական գործոնի: Այս ընթացքում միջանկյալ կարելի է համարել 1866-1877 թթ., երբ Վանը, որպես ինքնուրույն վարչամիավոր վերացվելով, ներմուծվել է Էրզրումի վիլայեթի մեջ: Հարկ է սակայն նշել, որ 1865 թվականից վարչամիավորների խոշորացումը նպատակ է հետապնդել թուլացնելու կայսրության հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ նաև հայերի, ուժգնացող ազատագրական շարժումները: Իսկ 1876 թվականից հետո որդեգրվել է վարչամիավորների կազմավորման ոչ էթնիկական նենգ սկզբունքը: 1880-ական թթ. վերջին ավարտվել է Վանի վիլայեթի ներքին վարչական կառուցվածքի, իսկ 1893 թ.՝ Ամադիայի ընդարձակ կազան հարևան Մոսուլին փոխանցումով, նաև երկրամասի արտաքին սահմանների ձևավորումը: 1914 թ. Վանի վիլայեթը զբաղեցնում էր 33631 կմ² տարածք, որից 3726,6 կմ²-ը բաժին էր հասնում մի շարք ջրային ավազանների (այդ թվում 3600 կմ²-ը՝ Վանա լճին, վիլայեթի մեջ ներառված էր վերջինիս մեծագույն մասը): Վիլայեթը կազմված էր Վանի և Հաքարիի սանջակներից: Առաջինն ուներ 8 կազա՝ 19720 կմ² տարածություն: Երկրորդը՝ Հաքարին, զբաղեցնում էր 13911 կմ² տարածք և կազմված էր 5 կազայից:

5. Վանի վիլայեթի տարածքի բնակավայրերի ցանցը ձևավորվել է 16-19-րդ դդ. ընթացքում՝ մի քանի գործոնների պայմաններում (16-17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմները, շուրջ 3 դար քրդական ցեղերի, ինչպես նաև՝ վերջիններիս և

օսմանյան իշխանությունների միջև պարբերաբար մղված պատերազմներ ու ընդհարումները, 18-րդ դ. վերջին քառորդից մինչև 1880-ական թթ. ընթացող նոր տեղաշարժերը, Աբդուլ-Համիդ 2-րդի վարչակարգի կողմից 1890 թ. «համիդիե» համակարգի ստեղծումը ևն): Առաջին աշխարհամարտի նախօրեին Վանի վիլայեթի տարածքում գոյություն ուներ 2042 բնակավայր, որոնցից 1121-ը Վանի, իսկ 921-ը՝ Հաքարիի սանջակներում:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Վանի նահանգը 1840-ական թթ.–1914 թ. (վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն), «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1986, թիվ 3, էջ 13-28:
2. Վանի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակներն ըստ առանձին գավառների և գյուղախմբերի, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1987, թիվ 2, էջ 83-110:
3. Վանի վիլայեթ (վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական վիճակը առաջին աշխարհամարտի նախօրեին), «Իրան-Նամէ», Ե., 1993, թիվ 1, էջ 8-10:
4. Վանի էյալեթի քրդական իշխանությունները, «Իրան-Նամէ», Ե., 1998, թիվ 2/3, էջ 23-37:
5. Հայկական կիսանկախ իշխանություններն ու մելիքություններն Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում (17-րդ դար – 19-րդ դարի երկրորդ կես), «Վէմ» համահայկական հանդես, Ե., 2011, թիվ 3, էջ 137-155:
6. Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին: Մաս առաջին. Վանի վիլայեթի կենտրոնական, հյուսիսային և արևելյան գավառները, «Վէմ» համահայկական հանդես, Ե., 2015, թիվ 2 (50), էջ 112-143:
7. Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին: Մաս երկրորդ. Վանի նահանգի հարավային ու արևմտյան գավառները և Վան քաղաքը, «Վէմ» համահայկական հանդես, Ե., 2015, թիվ 3 (51), Հավելված, էջ I-XXXV:
8. Վանի էյալեթի վարչատարածքային նախնական բաժանումը (1548 – 1555 թթ.), «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2018, էջ 96-114:

Բ. Ատլասներ և քարտեզներ.

1. Շատախ, մ.՝ 1:200000 - Վահե Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Ե., 2002, էջ 400-401 (ներդիրում):

2. Վանի վիլայէթ (1914 թ. դրութեամբ), մ.՝ 1:500000 - Յովսէփ Թօքաթ, Հայ արծաթագործ վարպետներ, Լօս Անճէլըս, 2005, էջ 54-55 (ներդիրում):
3. Վան-Վասպուրական (XIX դ. վերջ–XX դ. սկիզբ), մ.՝ 1:350000, Ե., 2007:
4. Էրզրումի և Վանի էյալեթները (նահանգներ) XVII-XVIII դդ., մ.՝ 1: 1350000 - «Հայաստանի ազգային ատլաս», Ե., 2008, էջ 56-57:
5. Վան-Վասպուրականը (XIX դ. վերջին և XX դ. սկզբին), մ.՝ 1:800000 - «Հայաստանի ազգային ատլաս», Ե., 2008, էջ 86:
6. Հայոց ծոր (20-րդ դ. սկիզբ), մ.՝ 1:220000 - Երվանդ Կյուրեղյան, Իմ հուշերի ճանապարհով, Ե., 2009, էջ 72-73 (ներդիրում):
7. Վանի սանջակը 1914թ., մ.՝ 1:750000 - «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Ականատեսների վկայությունները», հտ. I-III, Ե., 2012 (ներդիրում):
8. Հաքքարիի սանջակը 1914 թ., մ.՝ 1:700000 - «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Ականատեսների վկայությունները», հտ. I-III, Ե., 2012 (ներդիրում):
9. Վան-Վասպուրական ատլաս, Եր., 2015, 15 քարտեզ, 40 էջ:
10. Van-Vaspurakan Atlas, Yerevan, 2015, 15 maps, 40 pages.
11. Vilayet de Van en 1914, Échelle՝ 1:500000 - A-Do, Les Grands événements du Vaspurakan, Paris, 2015 (ներդիրում):

BADALYAN GEGHAM MIHRAN
THE EYALET (VILAYET) OF VAN IN 1548 – 1914
(HISTORICAL- GEOGRAPHICAL STUDY)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History" of Armenia" 07.00. 01

The defense of the dissertation will be held on April 16, 2019, 14^{00} at the seccion of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

In the present study for the first time one of the major administrative units created in the territory of Western Armenia- the Eyalet of Van is presented from the perspective of historical geography (since 1865-the Vilayet of Van). The history of the latter's inner administrative division and development as well as the patterns of border formation in 1548-1914 are discussed.

The dissertation is composed of an introduction, three chapters, a conclusion, a list of the used primary sources and research works, appendixes and maps related to the theme.

The necessity of writing the dissertation is substantiated in the introduction, the goal and issues, as well as the chronological circles, scientific novelty and applied significance, source basis and studies related to the main issue are presented.

The first chapter entitled "The formation of the administrative-territorial structure and borders of the Eyalet of Van" presents the creation of the Eyalet of Van and its primary administrative structure in 1548-1555. Briefly outlining the peculiarities of the administrative divisions of the Ottoman Empire and subsequently the data evidenced by the relevant sources, the administrative units of the newly created Eyalet, their location and borders are presented in detail. A series of most corrupted names of liva-sanjaks (cantons) are specified which enabled to concretize the latter's location.

The second chapter entitled "The Eyalet of Van in the second half of the 16th c.- the first half of the 19th c." presents the administrative-political situation formed after the Amasya Treaty. A special attention is paid to the semi-independent Armenian princedoms, melikdoms and autonomous communities as remnants of the Armenian statehood preserved up to the 19th c. in the territory of the Eyalet of Van. The latter were governed by the Armenian laws, had Armenian armed units and some of them (for instance, Sasun and Shatakh) were recognized by the Turkish government or neighboring powerful Muslim princedoms. The foreign (Kurdish) hukumet-princedoms of the Eyalet (Bitlis or Baghesh, Mahmudi or Khoshab, Hakkari or Julamerk, Khizan, Pinyanish, since 1740s- also Mush) are also presented.

The third book entitled "The Eyalet (Vilayet) of Van from 1840s-1914" presents those essential changes which were made by the Sublime Porte in the mentioned period. During that period, having liquidated the Armenian and Kurdish princedoms of Van, the Ottoman state had essentially subjected to changes all Western Armenia, including the administrative map of the Eyalet of Van. Administrative units called vilayets since 1865, were created and governed by the valis (governor) appointed by the center. İn 1877 Van also received the status of a vilayet. İn 1877-1893 the borders of the Vilayet of Van were periodically reduced and Bitlis was formed mainly by the western administrative units cut from the Vilayet of Van. As a result, in 1914 the territory of the Vilayet of Van constituted 33 631 km^2 (in the first half of the 19th c.- 46700 km^2). The formation of the settlement net from the Late Medieval period up to the end of the 19th is also presented.

The main results of the dissertation are summoned in the conclusions.

БАДАЛЯН ГЕГАМ МИГРАНОВИЧ

ВАНСКИЙ ЭЙАЛЕТ (ВИЛАЙЕТ) В 1548 – 1914 ГГ. (ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по Специальности 07.00.01 "История Армении"

Защита состоится 16-го апреля 2019 г., в 14^{00} на заседании специализированого совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

РЕЗЮМЕ

В работе на основе исторических первоисточников и материалов исследуются и обсуждаются закономерности внутренного административного деления и развития, а также формирования границ Ванского эйалета (с 1865 года - вилайету), который являлся одной из крупных административных единиц на территории Западной Армении.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы, приложений и карт.

Во введении обосновываются научная новизна и актуальность исследования, представлены цели и задачи, временные хронологические рамки, практическое значение работы, анализируются использованные источники и литература.

В первой главе - ,,Образование административно-территориального деления и границ Ванского эйалета" исследуются вопросы формирования и первоначального административного деления Ванского эйалета в 1548-1555 гг. Вкратце излагаются особенности административного деления Османской империи, на основе источников подробно представляются административные единицы новосозданного эйалета, рассматриваются вопросы их расположения и границ. В этом контексте уточнены наиболее искаженные наименования некоторых лив (санджаков, по турецки - уездов) Ванского эйалета.

Во второй главе - ,,Ванский эйалет во второй половине 16-го в. – в первой половине 19-го в." представлена административно-политическая ситуация, которая сложилась после Амасийского мирного договора 1555 г. Особое внимание уделено сохранившимся до середины 19-го в. остаткам армянской государственности - полунезависимым княжествам, меликствам и автономным общинам. Последние управлялись армянскими законами, имели вооруженные формирования, а некоторые (например – Сасун и Шатах) особыми грамотами (фирманами) были признаны турецким правительством или соседними могущественными мусульманскими княжествами. Также представлены иноплеменные (курдские) княжества или хукюмети